ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N3
ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/12 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՇՇԱԼՑՎԱԾ ՋՐԻ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆԻՍՏԻ

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝

Արեն Մեսրոպյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման պատասխանատու.

Անդամ՝

Վարդգես Դադոյան՝ ԱԻՆ շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության տնտեսական բաժնի գլխավոր մասնագետ.

Հայկ Ծատուրյան՝ ԱԻՆ իրավական ապահովման և միջազգային պայմանագրերի վարչության օրենսդրության կատարելագործման բաժնի առաջատար մասնագետ.

Հանձնաժողովի քարտուղար՝

Արմինե Գալուստյան՝ ԱԻՆ աշխատակազմի շենքերի, շինությունների պահպանման և տնտեսական վարչության գնումների կազմակերպման բաժնի գլխավոր մասնագետ.

1. Ընդունել ի գիտություն.

16.02.2019թ.

1.1 ՀՀ կառավարության 18.05.2017թ. թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի /Կարգ/ 19-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե /Կոմիտե/ հարցում է ուղարկվել ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/13 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների՝ հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ:

1.2 Ղեկավարվելով Կարգի 19-րդ կետի 4-րդ ենթակետով՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներին www.eauction.armeps.am համակարգով (Համակարգ) ծանուցվել է՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը և Կարգի 11-րդ կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված՝ առաջարկվող ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը /ամբողջական նկարագրեր/:

2. Հանձնաժողովն արձանագրեց.

2.1 Կարգով սահմանված ժամկետում՝ Կոմիտեից ստացվել է դրական եզրակացություն (կցվում է):

Համակարգում առկա տեխնիկական խնդիրներով պայմանավորված մասնակիցները չեն կցել 1.2 կետով պահանջվող փաստաթղթերը

3. Հաշվի առնելով վերոգրյալը՝ **հանձնաժողովը որոշեց.** նիստը կասեցնել մինչև Համակարգի տեխնիկական խնդիրների շտկումը

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

4. Ընդունել ի գիտություն.

27.02.2019թ.

4.1 Ֆինանսների նախարարության 22.02.2019թ. թիվ 01.1/26-1/2727-19 գրության համաձայն ընթացակարգն անհրաժեշտ է շարունակել ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգով: Ըստ այդմ մասնակիցներին ծանուցվել է առաջարկելով 3 աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստով ներկայացնել սույն արձանագրության 1.2 կետով սահմանված փաստաթղթերը:

4.2 Սահմանված ժամկետում մասնակիցները ներկայացրել են պահանջվող փաստաթղթերը (կցվում է):

5. Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հանձնաժողովը որոշեց.

5.1 Հաշվի առնելով գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված գնահատման թերթիկները (կցվում են) ընտրված մասնակիցներ ճանաչել.

- «Էվրի Դեյ» ՍՊ ընկերությունը 1-ին չափաբաժնով,
- «Պետրոսյան Հոլդինգ» ՍՊ ընկերությունը 2,3,4,7,9,10,13,15,16 չափաբաժիններով,
- Արման Կադալյան Վալերիի ԱՁ-ն 5,6,11,22 չափաբաժիններով,
- «ՀԻԴՐՈ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությունը 8,14,24 չափաբաժիններով,
- Արմեն Զաքարյան Գագիկի ԱՁ-ն 12,23 չափաբաժիններով,
- «ՔԼԻՆ ՖՈԱՄ» ՍՊ ընկերությունը 17,18,19 չափաբաժիններով,
- «Ռեալ Բուսինեսս» ՍՊ ընկերությունը 20-րդ չափաբաժնով,
- «ՊՐՈՖ-ՕՖԻՍ» ՍՊ ընկերությունը 21-րդ չափաբաժնով,

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

5.2 Հաստատել ԷԱՃԱՊՁԲ-ԱԻՆ-19/12 ծածկագրով ընթացակարգի պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Նիստին ներկա հանձնաժողովի անդամների անունները և ազգանունները

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Մեսրոպյան

անդամներ՝ _____ Վ. Դադոյան

_____ Հ. Ծատուրյան

քարտուղար՝ _____ Ա. Գալուստյան